ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի փետրվարի 13-ից մինչև մայիսի 30-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից իրականացվել են աշխատանքներ, որոնք ուղղված են եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, սոցիալական ներառման քաղաքականության արդյունավետ իրագործման, ոլորտային օրենսդրության կատարելագործման, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի արդիականացմանն ու շահառուների խնդիրների ուսումնասիրման և պատշաճ արձագանքման գործընթացների կատարելագործմանը: Աշխատանքները կատարվել են նախարարության ռազմավարական ուղղությունների և բաժնի գործառույթների շրջանակներում:

1. Տեղեկատվական համակարգում նոր տեսակի աջակցող միջոցների և դրանց անվանումների ավելացման նպատակով պատրաստել և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին ուղարկել եմ համապատասխան գրություններ:
2. Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն որոշման մեջ աջակցող միջոցների նվազագույն չափորոշիչների վերանայման, ինչպես նաև ցանկերը

վերանայելու և ընդլայնելու ուղղությամբ, դրանց տրամադրման գործընթացների աշխատանքներին:

3. Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Աստղավարդ» ՀԿ, «Աուտիզմ ազգային հիմնադրամ» «Հույսի Մեծամոր» ՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Փրկություն» ԲՀԿ) հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:
4. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմում-բողոքները մանրամասն ուսումնասիրվել են, տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ հաշմանդամություն ունեցող անձանց արտոնությունների և իրավունքների վերաբերյալ:
5. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետի հանձնարարությամբ ուղարկել եմ տարաբնույթ և բազմաթիվ գրություններ տարբեր գերատեսչություններին, մարմիններին, տեղային և միջազգային կազմակերպություններին:

Գրասենյակի ԵՏ գլխավոր: